ՇՈՎԻԱՆ—ԽԱՆՈՒՄ ԵՎ ԵԶԸՂ ՁԻ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Ըլել ա, չի ըլել մի թքավոր։ Էդ թքավորին ունեցել ա իրեք տղա։ Թքավորի աչքերը կուրացել ա։ Մենձ տղեն գնացել ա, հարցրել ա, թե.— Թքավո՛րն ապրած կենա, քու աչքերիդ դեղ ի՞նչ ա, որ բերենք, աչքերդ սաղանա։
Ասել ա.— Քու բանը չի իմ աչքերի դարմանը։
Դրանե եղը միջնակն ա գնացել, ասել ա.— Թքավո՛րն ապրած կենա, քու աչքերի դարմանն ի՞նչ ա, ասա ես բերեմ։
Դրան էլ ասել ա.— Քու բանը չի՛, դու կար ալ չես բերի։
Դրանից եղը պուճուրն ա գնացել, ասել ա.— Թքավո՛րն ապրած կենա, ի՞նչն ա աչքերիդ դարմանը, ասա ես բերեմ։
Ասել ա.— Դու կարալ չես իմ աչքերին դարման անիլ։
— Դո՛ւ ասա,— ասում ա,— աշխարի էն ծերին էլ ըլի, ես կբերեմ, թաք գետնի վրա ըլի, երկնքումը չըլի։
Ասում ա.— Իմ աչքերի դեղն էն ա, որտեղ որ իմ ձեռ ու ոտները դպել չեն, ընդեղան մի աղլուղ ֆող բերեք, աչքերիս քսենք՝ կսաղանա։
Պուճուր ախպերը գալիս ա էն էրկու ախպոր կուշտը, ասում ա.— Մեր հոր դարդը իմացա։ Նրա դարդը էն ա, ո՛րտեղ իրան ձեռ ու ոտը դիբել չի, ընդեղան ֆողիցը բերենք, էն նրա աչքերը կսաղացնի։ Մեր մենձ ախպերը դուն ես, դուն պետք ա գնաս բերես։
Մենձ ախպերը պատրաստվում ա, իրանց թավլիցը մի ձի ա դուս քաշում ու վեր ըլնում, իրան երաղը կապում ու գնում։ Գնում ա, շատն ու քիլը աստված գիտի, չվել էրկու ամսվան ճամփա։ Ընտեղ տենում ա մի էրկաթից ամարաթ շինած, ինքն իրան ասում ա. «Էս էրկաթե ամարաթը իմ հերը տեհած չիլի, եթե տեհած էր ըլեր՝ թամահքար էր՝ կքանդեր, կտաներ»։
Ընտիան ֆող ա վեր ունում։ Ետ դառնում։ Գալիս ա թքավորի կուշտը։ Թքավորը հարցնում ա տղին. «Որդի՛, գնացիր ֆողը ո՞րդեղան բերիր»։
Ասում ա.— Էրկաթե ամարաթի կշտիցը բերի։
— Ռավոտվա հացիս տեղն ա դա,— ասում ա թքավորը։
Միջնեկ տղեն ա գնում։ Իրենց թավլիցը մի ձի ա վեր ունում, իրան երաղը կապում, գնում։ Գնում ա էրկաթե ամարաթը անց ա կենում, հասնում ա էրծաթե ամարաթին։
Ասում ա. «Էն էրկաթ էր, իմ հերր թամահ չէ արել, քանդել տարել, էս էրծաթ ա, որ տեհած ըլեր՝ կքանդեր, կտաներ։ Ըստի էկած չի լի»։ Դա չորս ամսում էր հասել ըտի։ Ընտիան ֆող վե կալավ ու եդ դառավ դրբա հերը։
Էկավ հորր կուշտը, հերը հարցրուց.— Ո՞րդի հասար։
Ասավ.— Էրծաթե ամարաթին հասա։
Ասավ.— Իմ ճըշվա հացիս տեղն ա։
Է՛, հըմի հերթն էկավ պուճուր տղին։ Պուճուր տղեն գնաց մտավ թավլեն, էրկու հարիր ձի ունեին, հարիրը մի կռանն էր կապած, հարիրը՝ մի։ Ձեռը դրուց ձիանու մեջքին, մի ծերիցը ինչվել մի ծերը, որի վրա որ դրուց՝ մեջքները ճկռացրին, տարան գետնին դեմ արին։ Էկավ, ղազերի ծռտի տակին մի ձի կար, ձեռը դրուց մեջքին՝ ձիու մեջքը ձեռի տակին բըրձրացավ։ Ձին դուս քաշեց, տարավ լեղացրուց, թամուզացրուց, սկսեց գարի, դարման ուտեցնիլը, ընչել էրկու ամիս օրոն արավ։ Էրկու ամսից եղնը ուզեց որ ըղու ըլի. ձին քաշեց, որ գնա, ձին լիզու էլավ, խոսեց հետը.— Էդ սարքը, ինչ բերել ես դրել ինձ վրա, վրիցս վի կալ, գնա թքավորին խնդրվի, թե. «Քու ձիու սարքն եմ ուզում»։

Գնաց խնդրվեց, ասավ.— Էդ ո՞վ քի ասավ, որ էկել ես ուզում ես, Եզրդ ձին ասավ քի՞։
Թե.— Հա՛, Եզրդը ասավ։
Շատ դժվարութենով տվուց իրան։ Վիկալավ տարավ դրուց Եզրդ ձիու վրա։ Վեր էլավ, գնաց։ Ռավոտվա հացը գնաց կերավ էրկաթե ամարաթումը, ճաշվա հացը՝ էրծաթե ամարաթումը, ընդուցը եդը աստված գիտի, թե որդի գնաց։ Գնաց մի տարվա ճամփա, որտեղ որ Ծովիան-խանումն էր։ Գնաց Ծովիան-խանումի քաղաքը։
Ձին ասավ.— Գնա Ծովիան-խանումի կուշտը դու, քի կասի, թե. «Ո՞ւր ես էկել», կասես, «էկել եմ, որ քեզ տանեմ»։ Ծովիան-խանումը քեզ կասի, թե. «Ծովումը իլխա կա, էն իլխեն դուս պտիս բերիլ ու կթիլ, որ քու հունարը տենամ, որ ես քի հետ գամ, թե դուս բերես ոչ, դու ըստիան սաղ եդ չես գնայ»։ Դու հանձն առ, եդնա կթողես կգաս իմ կուշտը, ես ինչ կասեմ՝ էն կանես։
Տղեն ձին մի պըռավի տան կապեց, գարի տվուց, վիկացավ գնաց Ծովիան-խանումի կուշտը։ Ծովիան-խանումը, ինչ որ ձին ասել էր, ձիու ասած խոսքերը խոսաց։ Մի բան էվելցրուց, ասավ.— Ես քառասուն ղարավաշ ունեմ, էնղադար էն իլխիցը կաթը կթես, որ քառասուն ղարավաշը մեջը լեղանան։
Դա բոյինը կալավ ու թողեց գնաց ձիու կուշտը։ Ձին ասավ.— Ի՞նչ ասավ։
Թե.— Քու ասածիցը մի բան էլ էվելցրուց։
Թե.— Ի՞նչ էվելցրուց։
Թե.— Էնքան կաթ կթիլ պտեք, որ քառասուն ղարավաշը մեջը լեղանա, որ ընտով իմանամ, որ դու հունարդար ես։
Հարիրիցը մինը պակաս մարդ էր գնացել Ծովիան-խանումի կուշտը՝ տանելու, կարացել չին դրա էդ ասածը կատարեն, չիմնու էլ գլուխը տվել էր։ Հըմի էլ ասում ա. «Որ կատարես ոչ քու էլ գլուխդ կտամ»։
Ձին ասում ա.— Գնա օխտը որձ լծի գոմեշ առ, օխտը գոմեշն էլ մորթիլ տալ տու, կաշվնին փռե ծովի ղրաղին, ղում արա վրեն, լավ չորացրու, էնքան չորացրու, որ քար դառնան, օխտը փութ էլ՝ ձութ առ, օխտը փութ էլ՝ կուպրը. կաշին որ չորանա, մի փութ կուպրն ու ձութը ինձ վրա քսե, մի կաշին վրես գցե, ըսենց օխտը կաշին էլ վրես գցե, ընդուր հմար, որ ծովի մեջը մի ձի կա, որձ ձի ա, որը էդ իլխուն պըտրտում ա. եփոր ես գնամ նի մտնեմ, նա գալ պտի ինձ հետ կռիվ գցի, վեց հետ ծուլ կըլի, առաջի ծուլ ըլելովը էրկու փութ ձութն ու էրկու կաշին կտանի. ընդուցը եդնը կենտկենտ կտանի, վրա օխտին ուժը կպակսի, ընդով ես ծուլ կելնեմ, կտամ նրա մեջքը կկոտրեմ ու մադիաննին կքշեմ, դուս կբերեմ։ Էն վախտը մադիաննին կխըղճանան, դու ամենու պոչից մի ձար կըպռկես, որ կաղնեն, կթես։ Որ կթես պրծնես, Ծովիան-խանումը կասի. «Ծերքին դու նի մտի լեղացի»։ Ղլադվես ոչ՝ դու նի մտնես։ Ասա. «Թող քու ղարավաշնին լեղանան»։ Նի մտնեն թե չէ ղարավաշնին, նրանք ջուր կդառնան կաթնումը ու Ծովիան-խանումը, որ էդ տեսիլքը տենա՝ կխղճանա, քու հետ կգա։
Թքավորի տղին, ինչ որ Եզրդ ձին ասել էր, տեղովը կատարեց։ Կաշվընին դրուց ձիու վրա ու կուպրն ու ձութը քսեց. Ձին նի մտավ ծովը, էկավ էն էղիրը։ Եզրդի հետ սկսեց կռիվը։ Ոնց որ Եզրդը ասել էր, վեց հետ ծուլ էլավ, կաշվենին ու կուպրը տարավ չիմ, վրա օխտին ուժը պակսեց։ Եզրդը ծուլ էլավ, մի հետ տալով մեջքը իրեք տեղ կոտրեց։ Իլխին քշեց ծովիցը դուս արավ, բերուց, իլխին խղճացավ ցամաքումը, արավ մի աղալի մեջ։
Տղին ասավ.— Վախիլ մի՛, գնա ամենու պոչիցը մի ձար պոկի, կկաղնեն իշի պես։
Դա գնաց պոկեց, կաղնեցին։
Տղեն կթեց, մենձ ընկնանեքերը լըքցըրուց ու ասավ.— Համեցե՛ք, ով ուզում ա լեղանա։
Ծովիանխանումն ասավ.— Առաջ դո՛ւ լեղացի։

Նա լեղացավ ոչ, ասավ.— Ես լեղանալ չեմ։
Նրա դարավաշնին լեղացան, ընենց որ քառասունը մի անգամ մտան կաթան մեջը, տեղն ու տեղը ջուր դառան։ Եփոր ջուր դառան, Ծովիանխանումը խղճացավ, ասավ.— Ո՞ւր ա իմ Եզըղ ձին, որ ինձ տանի։
Տղեն գնաց դուս քաշեց, բերուց աղաքին կագնացրուց։ Դա բավականի ոսկի-արծաթ ուներ ու ծովի ակնեղեննի, ինքը ծովի աղջիկ էր, ամեն ակնեղենը վեկալավ, որոնք որ թեթև ին՝ գինը ծանտր էր, վեկալավ, որոնք ծանդր ին՝ գինը թեթև էր, նրանց թողուց։
Էնքան սիրուն էր Ծովիան-խանումը, որ մութ տեղը լիս էր տալի։ Թքավորի տղեն նրանե պակաս չէր, կասեիր էրկուսն էլ ծովից ըլին դուս էկած, մի խնձոր՝ կես արած։
Տղեն էդ ծովի ղրաղիցը մի աղլուխ ֆող վեկալավ, ասավ. «Ըստի իմ հոր ձիու ոտը դիպած չիլի»։
Ու ճամփա ընկավ, էկավ իր Հոր քաղաքը։ Գնալ-գալը իրեք տարի քաշեց։
Հերն իմացավ որդու գալը, շատ ուրախացավ։ Իմացավ, որ Ծովիան-խանումին բերել ա։ Տասնըչորս տարի հերը չալիշ էր էկել, որ բերի, կարացել չէր, հմի տղեն բերուց, շատ ուրախացավ։ Հարցրուց տղին.— Ո՞րդիան բերիր ֆողը։
Ասավ.— Ծովիան-խանումի ամարաթի աղաքիցը։
— Հա՛,— ասավ,— հըմի կսաղանամ, բի աչքերիս քսի, մի տարեն ճամփա իմ գնացածիցը ավել ես գնացել։
Տղեն բերուց ֆողը քսեց հոր աչքերին՝ հոր աչքերը բաց էլավ, սաղացավ։
Նորից բերուց օխտն օր, օխտը քշեր հըրսանիք արավ, տղին Ծովիան-խանումի հետ պսակեց։ Հըրսանիքը որ վերջացավ, էլչի գցեց քաղաքը, որ ղի տա քաղաքումը, թե՝ թքավորը ծերացել ա, հմիկենց եղնը թքավորի պուճուր տղեն ա թքավորը։
Չարըն ընդի, բարին ըստի։ Աստծանե իրեք խնձոր ընկավ. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ ալամ աշխարհքին։